Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. Սեպտեմբերի 9-ի թիվ 8 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից չորսը՝ Շ. Կարապետյանը, Գ. Հայրապետյանը, Պ. Մելքոնյանը և Ն. Սիրականյանը, բացակայում էին Մ.Ավետիսյանը, Կ. Արսենյանը, Ա. Սիրականյանը /առանց հարգելի պատճառների/:
Նիստը վարեց գյուղապետ Ռ. Սիրականյանը:
Արձանագրեց Գ.Ղազարյանը:

Օրակարգ՝
Հարց-1. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգը քվեարկվեց՝
Կողմ 4, դեմ 0, ձեռնպահ 0:

Համայնքի ավագանու անդամներ՝ _____ Շ. Կարապետյանը

_____ Գ. Հայրապետյան

_____ Պ. Մելքոնյան

_____ Ն. Սիրականյան

Վարդաձորի գյուղապետ՝ _____ Ռ. Սիրականյան

Արձանագրող՝ _____ Գ. Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

09-ը Սեպտեմբերի 2016թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը Վարդաձոր համայնքի բնակչից սեփականության իրավունքով ձեռք է բերել Վարդաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1 միավոր վարելահող 83 քառ.մ մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրի 05-084-0104-0229:

Հողամասերի ձեռք բերման հիմնական նպատակը Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցումն ու սպասարկումն իրականացնելն է:

Վերը նշված ծածկագրով հողամասում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով 20.11.2008թ. « Իրան-Հայաստան 400կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին» № 1334 - Ն որոշման պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի վարչական սահմաններում գտվող «ԲԷՑ» ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 05-084-0104-0229 կադաստրային ծածկագրով վարելահողը՝ 83 քառ.մ մակերեսով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2.Խնդրել համայնքի ղեկավարին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 4, դեմ 0, ձեռնպահ 0:

Համայնքի ավագանու անդամներ՝ _____ Շ. Կարապետյանը

_____ Գ. Հայրապետյան

_____ Պ. Մելքոնյան

____________________ Ն. Սիրականյան

Վարդաձորի գյուղապետ՝ ____________________ Ռ. Սիրականյան

Արձանագրող՝ ____________________ Գ. Ղազարյան